

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2021թ. ապրիլի 27-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 29-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին հարց:
2. Հաղորդում ավարտական աշխատանքների պատրաստման ընթացքի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):
3. 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Նարինե Գարնիկի Դավթյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Նարինե Գարնիկի Դավթյանին շնորհել դոցենտի գիտամանկավարժական կոչում:

2. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ավարտական աշխատանքների պատրաստման ընթացքի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնների վարիչներն ամփոփ տեղեկությունների ներկայացրին ավարտական աշխատանքների պատրաստման ընթացքի, առկա տեխնիկական և բովանդակային խնդիրներին, դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված և ձեռնարկվելիք քայլերի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ամբիոնների վարիչները ներկայացրին ամբիոններում սոցիոլոգիական հարցումների քննարկման արդյունքները: Պրոֆ. Գ.Ղազինյանը ներկայացրեց ուսանողների կողմից արձանագրված առանձին խնդիրներ՝ կարևորելով դրանց լուծման ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. Ընթացիկ հարցեր:

4.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ հեռակա ուսուցման ասպիրանտ Նարինե Առաքելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Վ.Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նարինե Առաքելյանի՝ «Կառուցապատման հարաբերությունների իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք»:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Սյուզաննա Վարդանյանի թեկնածության ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ԵՊՀ Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ Սյուզաննա Վարդանյանի՝ «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք»,

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Վ.Այվազյանին,

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուլջան